

ու ասիկա ունէր իր պատճառը: Հայկական տաղասացական այս արուեստը զարգացաւ ժ.Պ. դարուն եւ անկէ վերջ մինչեւ ժ.Ձ. դար տեւելով: ժ.Պ. դարէն առաջ արդէն Պարսիկ տաղասացական արուեստը զարգացած եւ իր բարձրութեան հասած էր. որուն ինչ ծագում ունենալը հոս նշանակութիւն չունի. սա որոշ է որ բացարձակապէս տիրապետող Պարսիկ-թուրք-Մոնկոլ-թաթար Մահմետական միակ գրականութիւնն էր, ըլլալով նաեւ գոյութիւն ունեցող միակ գրականութիւնը այդ հողամասին մէջ, եւ գրականութեան ծաւալի Հայը պէտք ունէր գրական ակի մը՝ գոհացընելու համար իր ճաշակի պապակը. տրուած քաղաքական պայմաններուն տակ ստեղծագործել կարելի չէր: Բիւզանդականը եւ քրիստոնեայ Ասորականը մեռած, մարած էին: Արաբականը նոյնպէս հին, եւ մնացած ըլլալով գիտութեան յատուկ, որով անմատչելի էր եւ դժուարիմաց իր իրթին լեզուով, դժուարիմաց նիւթերով, գրեթէ տաղասացին անմարսելի. անդին կը մնար Պարսկականը, աշխարհագրական կերպով մօտ, լեզուաւ եւ գաղափարներով ծանօթ եւ դիւրահասկնալի, տուն տալով փիլիսոփայութեան մը որ միթիթարիչ էր, մեր հոգեկան-բարոյական փլուզումի այդ շրջանին որ ժ.Պ. դարէն սկսեալ պատմական տխուր դէպքերու շարքով մեր աւանդական բարոյապաշտութիւնը եւ հոգեպաշտութիւնը մահացու կերպով հարուածուեցաւ եւ մենք մեր իրձերուն, երազներուն, դիտումներուն հակասող դառնաղէտ իրական երեւոյթներուն ազդեցութեան տակ ճնշուեցանք փնտռելով նոր յեցակէտ մը, Նարեկացիէն, Ներսէսներէն վերջ. ատիկա գտանք ժ.Պ. դարէն յետոյ ու հետեւեցանք Պարսիկ իրապաշտական, աշխարհիկ գրական արուեստին, ուժ տալով մեր տաղանդին այս ուղղութեամբ ելլին. ատիկա ամենէն դիւրինը գտանք կամ կարծեցինք գտած ըլլալ:

Գրականութեան մէջ պատահածին պէս չպատահեցաւ գորգաշինութեան գեղարուեստական արհեստին մէջ: Մինչ Պար-

սից տաղասացական գրականութիւնը զարգացած էր ժ.Ք. դարուն, գորգաշինութիւնը միայն ժ.Ձ. դարուն յայտնուեցաւ, քիչ մը անակնկալօրէն. (օրինակ Արտեպիլ շինուած Մահմետական Մագսուտի ժ.Ձ. դարուն գորգը) մինչ գորգաշինութիւնը Հայոց մօտ պատմականօրէն ը դարէն իսկ կը սկսէր (կատարեալ կտորներ զարգացած արուեստի եւ արհեստի ճիւղերով ժ.Պ. դարէն ունինք). որով պարսիկ ժ.Ձ. դարուն արուեստը չէր կրնար արդէն իր գոյութենէն շատ ու շատ առաջ գոյութիւն ունեցող Հայ գորգաշինութեան արուեստին համար ըլլալ այն՝ ինչ որ Պարսիկ գրականութիւնը եղաւ Միջնադարեան Հայ Տաղասացութեան համար: Ասկէ գտաւ ժ.Ք. դարէն սկսեալ իտաղազութեան կարճ շրջաններ վայելեց Հայաստան մինչեւ ժ.Պ. դար (1375ին ինկաւ Կիլիկիան, վերջին Հայկական անուանական ինքնավար կեդրոնը), եւ թաթարական տիրապետութեան տակ Հայը իր վայելած բաղադատական հանգրստութեամբ կրցաւ ձեռնել ու ծաղկեցնել հետեւողական գրականութիւն մը, մինչ էրբ գորգաշինութիւնը ծաղկիլ սկսաւ ի Պարսկաստան, ժ.Ձ. դարէն սկսեալ Հայաստան ալ աւելի անտանելի, քայքայման, փճացման, անշքացման կեանք մը ապրեցաւ: Ժ.Ք. դարուն մոլեռանդ Մահմետական բռնատիրութիւնը այնպիսի աղետալի համեմատութեան մը հասաւ որ Հայ գրականութիւնն իսկ, որ հետզհետէ ազգային նկարագիրը կը կորսնցընէր, ջնջուեցաւ, բնիկ ժողովրդին հետ ամէն բան արմատախիլ եղաւ ցիրուցան ընելով Հայ արուեստը ու մշակոյթը. որով մենք պարսկական գորգաշինութեան արուեստին ծաղկումէն օգտուելու առիթ կամ միջոց չունեցանք, եւ նոյն իսկ կրնանք ըսել որ մեր բռնագաղթ եղած ժողովրդին եւ արուեստին շնորհիւ միայն Պարսիկ գորգաշինական արուեստը գոյութեան իրաւունք ստանալով զարգացաւ: Ահա թէ ինչու Ա. Ս. ի նման չեմ խորհիր թէ «Պարսկական արուեստը մանաւանդ մոնկոլեան շրջանին, իբր միջնորդ ծառայած կրնայ